

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նորընծա երեք սարկավագները

1983 թ. դեկտեմբերի 9-ը ուրախության և հոգեկան մխիթարության օր էր Բաղդադի հայ հավատացյալ ժողովրդի համար: Այդ օրը Բաղդադի հայոց առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում «Յոտթին Սուրբ Աստուածածնայ յԱնապէ» տոնի առթիվ մատուցված ս. պատարագի ժամանակ Բլաքի հայոց թեմի բարեջան առաջնորդ Տ. Ավագ եպս. Աստուրյանի ձեռամբ և Տ. Զավեն քհն. Փոլատյանի խարտավիրակությամբ սարկավագության աստիճան ստացան Մարկոս Իսկենդերյանը, Զավեն Ստեփանյանը և Արմեն Իշխանյանը ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Հավարտ ս. պատարագի նորընծա սարկավագները, առաջնորդությամբ խարտավիրակ քահանա հոր, առաջնորդարանի սրահում ներկայացան ձեռնադրիչ սրբազանին՝ հայտնելու իրենց երախտագիտական զգացումները և ստանալու նրա օրհնությունը:

Տ. Ավագ եպիսկոպոսը շնորհավորելով նորընծա երիտասարդ սարկավագներին և գնահատելով նրանց եկեղեցասեր և ծառայական ոգին՝ խրախուսիչ խոսքերով հորդոր կարդաց նրանց Ս. Ստեփանոս նախասարկավագի օրինակով մինչև վերջ լինել քաջ հավատացյալներ և անսասան պահապաններ Հայաստանյայց Եկեղեցու և հայկական նվիրական ավանդությանց: Նա օրհնեց երեք սարկավագներին՝ մաղթելով նրանց քաջառողջություն և հաջողություն իրենց եկեղեցական ծառայության ասպարեզում:

Ապա հավատացյալների բազմությունը, որ հավաքված էր նորակառույց առաջնորդարանի սրահում, ուրախ տրամադրությամբ և ջերմորեն շնորհավորեց առաջնորդ սրբազան հորն ու նորընծա սարկավագներին: